Վորլդ Վիժնի Մատակարարների Վարվեցողության կանոնակարգ

Վերջին թարմացումը՝ սեպտեմբեր 2022

Վորլդ Վիժնը հավատարիմ է էթիկայի և բարոյականության ամենաբարձր չափանիշերի պահպանմանը, ներառյալ՝ մեր ծրագրերում ընդգրկված երեխաների ու չափահասների պաշտպանությանը գնումների իրականացման իր բոլոր գործընթացներում: Այս Վարվեցողության կանոնակարգը ներկայացնում է մի շարք սկզբունքներ և վարքի դրսևորումներ բիզնեսի վարման մեր ամենօրյա աշխատանքում՝ ապահովելով գնումներին առնչվող էթիկայի միջազգայնորեն ճանաչված կանոնների պահպանումը: Բիզնեսի հաջողված փորձի ստանդարտ տարրերը նույնպես ենթակա են կիրառվեն: Վարվեցողության կանոնակարգը գործում է ՎՎ բոլոր մարմինների աշխատակազմերի համար և հավասարապես տարածվում է նաև մատակարարների, կապալառուների, կամավորների ու Խորհրդի անդամների վրա:

<u>Վորլդ Վիժնն իր մատակարարներից ակնկալում է հետևյալը.</u>

1. Բարելավել գին-որակ հարաբերակցությունը –

ա) Գործուն կերպով ձգտել ցույց տալ արդյունքներ և բարելավել դրանք, և նվազեցնել ծախսերը երկարաժամկետ համաձայնագրի և/կամ Գնման պատվերների շրջանակներում,

բ) Գինը սահմանել պատշաճ և ազնիվ կերպով՝ արտացոլելով պահանջներն ու ռիսկերը

2. Գործել արհեստավարժ և ազնիվ կերպով –

ա) Գնային առաջարկներ ներկայացնելիս լինել ազնիվ և իրատես՝ ծավալային և որակական կարողությունների գնահատման հարցում,

բ) Վորլդ Վիժնն ակնկալում է, որ իր մատակարարներն իրենց հերթին կքաջալերեն և կաշխատեն իրենց սեփական մատակարարների ու ենթակապալառուների հետ՝ ապահովելով, որ վերջիններս նույնպես ձգտեն առաջնորդվել այս Վարվեցողության կանոնակարգի սկզբունքներով և հարկ եղած դեպքում կարողանան ցուցադրել դա:

գ) Գործել այնպես, որ պայմանները լինեն բարենպաստ՝ Վորլդ Վիժնի հետ հասուն և էթիկական բիզնես հարաբերություններ ստեղծելու համար:

դ) Դրսևորել հստակ, գործուն հանձնառություն կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հանդեպ:

3. Լինել հաշվետու –

ա) Կիրառել գնային/գնագոյացման համակարգեր, որոնք համապատասխանեցնում են վճարումներն արդյունքներին և արտացոլում են կատարողականի ռիսկի ավելի հավասարակշռված բաժանում:

բ) Ակնկալել, որ պետք է հաշվետու լինել և պատասխանատվություն կրել անսպասելի արդյունքների համար և պատասխանատվություն ստանձնել իրենց դերի համար, ազնիվ լինելով և դասեր քաղելով սխալներից:

4. Գործողությունները համակարգել Վորլդ Վիժնի հետ –

ա) Կարողանալ գործել Վոլրդ Վիժնի բոլոր գրասենյակներում, այդ թվում՝ անկայուն և հակամարտությունից տուժած շրջաններում:

բ) Տարածել ու փոխանցել նորարարությունն ու գիտելիքի լավագույն փորձը՝ առավելագույնի հասցնելով համընդհանուր զարգացման ազդեցությունը:

5. Համաձայնել խուսափել որևէ տեսակի Ճահերի բախումից—

Ի լրումն, Մատակարարը կամ Կապալառուն հաստատում են, որ նրանք ոչ մի հարաբերություն, կից բիզնես, ներգրավվածություն, միություն, պաշտոն, ֆինանսական շահ չունեն, և չեն ստացել որևէ նվեր, վարկ, կամ ներգրավված չեն որևէ դրամական փոխանցման մեջ, որոնց համար կարիք կլիներ լրացուցիչ բացահայտումներ կատարել, համաձայն Վորլդ Վիժնի կամ Վիժն Հիմնադրամի Ճահերի բախման քաղաքականության:

6. Հետևել աշխատանքի միջազգային կոնվենցիաներին և ընթացիք աշխատանքային օրենսգրքին

7. Ունենալ ուժեղ Բնապահպանության քաղաքականություն –

ա) Վորլդ Վիժնն ակնկալում է, որ իր մատակարարներն ունենան [վարեն] բնապահպանության արդյունավետ քաղաքականություն և գործեն առկա օրենսդրության ու կանոնակարգերի համաձայն՝ պաշտպանելու շրջակա միջավայրը:

ՎՎ Մատակարարի Վարվեցողության Կանոնակարգի հետ ծանոթ լինելու հաստատում

Ստորև ստորագրությունս հաստատում է, որ ես/մենք/մատակարարը կարդացել, լիովին հասկացել եմ/ենք/է և համաձայն եմ/ենք/է վերոհիշյալ ՎՎ Մատակարարի Վարվեցողության կանոնակարգի սկզբունքներին: Ես հասկանում եմ, որ ցանկացած գործողություն, որը համահունչ չէ Մատակարարի Վարվեցողության կանոնակարգին, կարող է հանգեցնել Վորլդ Վիժնի հետ բիզնես հարաբերության խզմանը:

Մատակարարի ներկայացուցչի անուն և պաշտոն (տպագիր)	Ստորագրություն
Ընկերություն/Մատակարարի անուն	Ամսաթիվ